ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թիվ 6(56), 31 հուլիսի, 2023թ.

ՀՀ ՆԳՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԵԱՀԿ ՓՈՐՁԱԳԵՏԸ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

ԵԱՀԿ «Անվտանգության ոլորտի կառավարման ամրապնդումը Հայաստանում» ծրագրի շրջանակում իրականացվող՝ ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունից բխող միջոցառումների կատարումը գնահատելու նպատակով հուլիսի 13-ին Կրթահամալիր էր այցելել ԵԱՀԿ փորձագետ Լաուրի Թաբուրին:

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պետ, ոստիկանության գնդապետ Մ. Մուրադյանը, ողջունելով հյուրին, իր երախտագիտությունը հայտնեց՝ Ներքին գործերի նախարարությանը և Կրթահամալիրին մշտապես աջակցելու համար, մասնավորապես՝ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ձևավորման հայեցակարգի վերաբերյալ վերջինիս կարևոր դիտարկումների ու առաջարկությունների համար:

Լաուրի Թաբուրին իր հերթին շնորհակալություն հայտնեց ընդունելության համար և բարձր գնահատելով ՆԳՆ կրթահամալիրի ձևավորման հայեցակարգի մշակման գործում Կրթահամալիրի ղեկավարության ջանքերը՝ հավելեց, որ կրթությունն է յուրաքանչյուր բարեփոխման հիմնաքարը:

Կրթահամալիրի պետը մանրամասն ներկայացրեց բարեփոխումների ռազմավարությունից բխող իրականացված միջոցառումները, որոնք միտված են եղել մասնագիտական կրթական ծրագրերի չափորոշիչները ժամանակակից պահանջներին համահունչ դարձնելուն:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև քրեական ոստիկանության, համայնքային ոստիկանության և ազգային գվարդիայի կրթական չափորոշիչների նախագծերի մշակմանը վերաբերող հարցեր:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՋԸ



ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետ, ոստիկանության գեներալ մայոր Ա. Կ. Հովհաննիսյանի՝ 2023թ. ապրիլի 14-ի 830-Ա հրամանով՝ ծառայողական պարտականությունները բարեխղճորեն, բարձր պատասխանատվությամբ կատարելու և բազմամյա ծառայության, երիտասարդ սերնդին հայրենասիրական ոգով դաստիարակելու համար ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ՀՀ ոստիկանության պատմության թանգարանի առաջատար մասնագետ, ոստիկանության պաշտոնաթող գնդապետ Դավիթ Հովհաննեսի Հովսեփյանը պարգևատրվել է «Ոստիկանության 100-ամյակ» հոբելյանական մեդալով:

ՏԱՐԻՆ ԱՄՓՈՓՎԵՑ ԷՔՍԿՈՒՐՍԻԱՅՈՎ

ՆԳՆ կրթահամալիրի ուսանողական խորհուրդի տարեկան ամփոփիչ նիստում որոշվեց տարին ամփոփել էքսկուրսիայով:

Հուլիսի 5-ին ուսանողական խորհրդի անդամները՝ նախագահ Հարություն Հարությունյանի գլխավորությամբ, այցելեցին Գառնու հեթանոսական տաճար, ծանոթացան տաճարի պատմամշակութային նշանակությանը, այնուհետև ուղևորվեցին դեպի Գեղարդ, որտեղ միասնական աղոթք բարձրացրին՝ հանուն հզոր հայրենիքի ու նվիրական երազանքների իրականացման: Օրվա երկրորդ կեսն անցավ ընկերական ջերմ միջավայրում: Արդյունքում ձևավորվեց ավելի ամուր ու վստահելի ընկերություն: Խորհրդի անդամները միմյանց հրաժեշտ տվեցին հաջորդ ուսումնական տարում կրկին ակտիվ ու միասնական լինելու պայմանով, իսկ հայրենիքին անդավաճան ծառայելը նրանցից յուրաքանչյուրի կարգախոսն է:

Այս հիշարժան օրվա կազմակերպմանն աջակցելու համար ուսանողական խորհուրդն իր խորին շնորհակալությունն հայտնեց Կրթահամալիրի ղեկավարությանը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՍԸՆԹԱՑ՝ ԲՈՒԴԱՊԵՇՏՈՒՄ

ԵՄ իրավապահ մարմինների վերապատրաստման գործակալության (CEPOL) «Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի վերապատրաստում և գործառնական համագործակցություն» (TOPCOP) տարածաշրջանային ծրագրի աշխատակազմի նախաձեռնությամբ Հունգարիայի Բուդապեշտ քաղաքում հուլիսի 10-15-ը տեղի ունեցավ էլեկտրոնային ուսուցման թեմայով վերապատրաստման դասընթաց, որին մասնակցում էին Արևելյան գործընկերության երկրների պատվիրակությունները: Հայաստանի Հանրապետության պատվիրակության կազմում էր ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ՈՒՄ և զարգացման վարչության միջազգային համագործակցության և SS ներդրման բաժնի տեսուչ, ոստիկանության կապիտան Ա. Հարությունյանը:

Դասընթացի շրջանակներում քննարկվել են ABCD գործիքակազմի ուսումնասիրում, հեռավար ուսուցման հարթակների և ուսումնական գործունեության օրինակներ, ուսումնական ծրագրի նախագծման մոդելներ և կարիքների գնահատում, լրացված իրականություն, Articulate Storyline գործիքակազմ, սցենարների վրա հիմնված ուսուցման տեսություն և պրակտիկա, H5P գործիքակազմի պրակտիկա, ինքնուրույն ուսուցում, խառն ուսուցման ձևեր և տվյալ թեմային առնչվող այլ հարցեր:

Չևաչափը ներառում էր յուրաքանչյուր օրվա թեմայի առնչությամբ բանախոսների զեկույցները, որոնց հաջորդում էին մասնակիցների հարցադրումները, այնուհետև գործնական առաջադրանքների միջոցով ամրապնդում էին ստացած գիտելիքները:

Հնգօրյա դասընթացի ավարտին մասնակիցները հավաստագրեր ստացան:

ՀՈՒԼԻՍԻ 5-Ը՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐ

Սահմանադրությունները՝ որպես տվյալ պետության գրված հիմնական օրենք, նոր ժամանակաշրջանի երևույթ են, որոնց ստեղծման և կյանքի կոչելու համար երկարատև պայքար են մղել տարբեր երկրների ժողովուրդներ և ազգություններ: Պատմագիտության մեջ ընդունված է ասել, որ առաջին սահմանադրությունն Ամերիկայի Միացյալ Նահանգների 1787թ. Սահմանադրությունն է, որը գործում է մինչ օրս՝ իհարկե, ավելի քան 200 տարվա ընթացքում կատարված 26 ուղղումներով:

Եվրոպայում առաջին սահմանադրություններն ընդունվել են 1791 թ.՝ նախ՝ այդ տարվա մայիսի 3-ին Լեհաստանում, այնուհետև նույն տարվա սեպտեմբերի 3-ին՝ Ֆրանսիայում: վերոնշյալի համատեքստում հավելենք, որ նշված սահմանադրություններն առաջին գործող սահմանադրություններն են, որոնք չեն մնացել թղթի վրա գրված և աստիճանաբար տվյալ երկրներին տարել են ժողովրդավարացման զարգացման ճանապարհով:

Սակայն «սահմանադրություն» տերմինը շատ ավելի հին պատմություն ունի: Ընդունված է ասել, որ տերմինը ծագում է լատինական «constitution» բառից, որը նշանակում է «սահմանում», «կառուցվածք»: Իսկ դեռևս Ք.ա. 4-րդ դարում հույն մտածող Արիստոտելը «սահմանադրություն» հասկացությունն օգտագործում էր պետության կառուցվածքի, պետական իշխանության արդյունավետ կազմակերպման, նրա ժողովրդավարական և արդարացի լինելու մասին խոսելիս: Հին Հունաստանում և Հին Հռոմում երկար ժամանակ սահմանադրություն էին կոչվում նաև կայսրերի ընդունած իրավական ակտերը:

Հայկական իրականությունում առանձնանում է 5-րդ դարում Վաչագան թագավորի նախաձեռնությամբ ընդունված «Կանոնական սահմանադրությունը»: Վաչագանը Նվարսակի 484 թ. պայմանագրից հետո Արցախ-Ուտիք իշխանությունը հռչակել էր որպես թագավորություն, որը ճանաչվել էր Պարսկաստանի կողմից: «Կանոնական սահմանադրությունը» հատկանշական է այն առումով, որ մշակվել և ընդունվել է ժամանակի աշխարհիկ և հոգևոր իշխանության ներկայացուցիչների լայն ընդգրկմամբ: Այդուհանդերձ, Վաչագան թագավորի Աղվեն ամառանոցում ընդունված «Կանոնական սահմանադրությունը» հիմնականում կարգավորում էր հոգևոր կյանքի հարաբերությունները:

Հայոց պատմության մեջ Սահմանադրության նախագծման ամենահամարձակ փորձերից է 18-րդ դարում Հայաստանի ազատագրության Մադրասի խմբակի, մասնավորապես՝ Շահամիր Շահամիրյանի կողմից շարադրված «Որոգայթ փառացը», որը միաժամանակ և՛ Հայաստանի ազատագրության ծրագիր էր, և՛ ապագա անկախ Հայաստանի սահմանադրության նախագիծը: «Որոգայթ փառացը» ամբողջությամբ հիմնված էր ժամանակի արևմտաեվրոպական լուսավորական գաղափարների վրա: Հրատարակվել է Մադրասում 1788-89-ին (թեև տիտղոսաթերթին նշված է 1773 թ.) Շահամիր Շահամիրյանի որդի Հակոբի անունով:

«Որոգայթ փառացը» նախատեսում էր հռչակել բոլոր քաղաքացիների հավասարությունն օրենքի առջև, նրանց անձի, խոսքի, դավանանքի և գործունեության լիակատար ազատությունը: Նախատեսվում էր գերագույն և օրենսդիր իշխանությունը վերապահել ընտրովի մարմնին (պառլամենտին)՝ Հայոց տանը, որն էլ պետք է կազմավորեր գործադիր իշխանությունը՝ Նախարարությունը: Վերջինս պետք է բաղկացած լիներ նախարարից (նախագահ) և 12 տեղակալներից: Նախարարը պետք է համարվեր նաև երկրի արտաքին գործերի պատասխանատուն և զինված ուժերի գերագույն հրամանատարը: Կառավարությունը լինելու էր Հայոց տան վերահսկողության ներքո, որն էլ իրավունք պետք է ունենար փոխելու կառավարությունը:

Քաղաքական նկատառումներից ելնելով՝ «Որոգայթ փառացում» առաջարկվում էր նախարար ընտրելու մեկ այլ՝ բացառիկ տարբերակ. հին հայկական արքայատների, մասնավորապես՝ Բագրատունիների շառավիղներից մեկն իր ցանկությամբ կարող էր ընտրվել ցմահ նախարար, եթե հավատարիմ ու հնազանդ մնար Հայոց տան սահմանած օրենքներին: Այս առաջարկի նպատակն էր շահագրգռել վրաց Բագրատունի թագավոր Հերակլ 2-րդին, որին Մադրասի խմբակը կարևոր դեր էր վերագրում Հայաստանի ազատագրման գործում:

Առաջարկվում էր նաև դատական համակարգի կառուցվածքը և իրավասությունը, նախատեսվում էր եկեղեցու առանձնացումը պետությունից, դպրոցի առանձնացումը եկեղեցուց: Նախատեսվում էր պարտադիր կրթություն՝ առանց սեռի տարբերության, հանրապետության զինված ուժերի մասին դրույթներ, որոնց համաձայն մշտական 90 հազարանոց բանակը պետք է համալրվեր վիճակահանությամբ (100 տղամարդուց 5-ը, ռազմական ուսուցումն ու ծառայությունը՝ 7 տարի):

Սեփական իրավական համակարգ և, առաջին հերթին, սահմանադրություն ունենալու իրական նախադրյալներ ստեղծվեցին 1918 թ. Հայաստանի Առաջին Հանրապետության անկախացմամբ, սակայն անկախության երկուսուկես տարին բավարար չէր արտաքին և ներքին քաղաքական, տնտեսական և հումանիտար ոլորտներում ծանրագույն իրավիճակում գտնվող պետության համար սեփական սահմանադրություն մշակելու և ընդունելու համար:

1920 թ. Հայաստանի խորհրդայնացումից, ապա նաև՝ 1922 թ. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության ստեղծումից հետո հայկական իրավական համակարգն ամբողջությամբ դարձավ Խորհրդային Միության իրավական համակարգի անբաժան մասը: Խորհրդային շուրջ 70-ամյա պատմության ընթացքում Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունն ունեցավ երեք սահմանադրություն:

Առաջինն ընդունվեց 1922 թ. փետրվարի 3-ին ՀԽՍՀ բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայանիների դեպուտատների խորհուրդների առաջին համագումարում: ԽՍՀՄ-ի և Անդրֆեդերացիայի կազմավորումից հետո ՀԽՍՀ սահմանադրությունը փոփոխվեց և լրացվեց, 1925 թ. ՀԽՍՀ խորհուրդների 4-րդ համագումարը վավերացրեց այդ փոփոխություններն ու լրացումները: ՀԽՍՀ երկրորդ սահմանադրությունն ընդունվեց 1937 թ. մարտի 23-ին ՀԽՍՀ խորհուրդների 9-րդ արտակարգ համագումարում, իսկ երրորդը՝ 1978 թ. ՀԽՍՀ 9-րդ գումարման Գերագույն խորհուրդի արտահերթ նստաշրջանում: Այնուամենայնիվ, ՀԽՍՀ սահմանադրությունները դժվար է գնահատել որպես Հայաստանի իրավական համակարգը բնորոշող երևույթներ, քանի որ դրանք ընդունվել էին Ռուսաստանի ԽՖՍՀ 1918 թ. սահմանադրության, ԽՍՀՄ 1924 թ., 1936 թ. և 1977 թ. սահմանադրությունների հիման վրա:

1991 թ. Հայաստանի անկախության վերականգնմամբ անխուսափելի դարձավ նոր՝ ազգային սահմանադրության ընդունումը: Սահմանադրությունն ընդունվեց 1995 թ. հուլիսի 5-ին համաժողովրդական հանրաքվեով: Սահմանադրության ընդունումից հետո հուլիսի 5-ը դարձավ պետական տոն՝ Սահմանադրության օր:

Սահմանադրությունն ամրագրեց Հայաստանի Հանրապետության բնույթը՝ որպես ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետություն, հռչակեց մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները, սահմանեց հանրապետության կառավարման ձևը՝ հիմնված օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման սկզբունքի վրա: Սահմանադրությամբ ձևավորվեց կիսանախագահական կառավարման ձև:

Անչափ կարևոր է, որ ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի գիտակցի և ընդունի Սահմանադրությունը ոչ միայն որպես իրավունք ու պարտականություն, այլ նաև փիլիսոփայություն և արժեհամակարգ, որով կպայմանավորվեն նաև երկրի ներսում ծավալված գործունեությունները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ժողովրդավարական երկրում Սահմանադրությունն է պետության ու պետականության առանցքը և երկրի անկախությունը երաշխավորող կարևորագույն ինստիտուտը, անտարակույս է, որ որքան բարձր լինի սահմանադրականության գիտակցումը յուրաքանչյուրիս մեջ, այնքան ժողովրդավար կլինի մեր երկիրը:

Տիգրան Խաչատրյան
ոստիկանության մայոր

ՀԱՎԱՏԱՐԻՄ ԼԻՆԵԼ ՀԱՅՐԵՐԻ ՕՁԱԽԻՆ՝ ՉԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ ՊԱՀՊԱՆԵԼ ՆՐԱ ՄՈԽԻՐՆԵՐԸ ԱՅԼ ԱՎԱՆԴԵԼ ՆՐԱ ՀՈՒՐԸ

«Կրթահամալիրի սովորողները» խորագրով նախագծի շրջանակներում այս անգամ զրուցել ենք ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի առկա անվճար ուսուցման 2-րդ կուրսի սովորող, ոստիկանության սերժանտ Հարություն Հարությունյանի հետ:

Գնացինք...

- Խոսենք Հարությունից... Որպես խորագիր՝ երեք նախադասությամբ պատմի՛ր քո մասին:

- Առաջին հերթին կասեմ, որ սիրում եմ հայրենիքս և պետությունս: Նպատակասլաց եմ, անկոտրում ու վճռական, տանել չեմ կարողանում սուտը, անտարբերությունն ու դավաճանությունը, գնահատում եմ անկեղծությունն ու նվիրվածությունը: Գործողություններիս մեջ առաջնայնությունը տալիս եմ արդյունավետությանը:

- Դրվագներ, որ տպավորվել են մանկության տարիներից:

- Ասում են՝ մանկության տարիներին շատ ակտիվ և հետաքրքրասեր եմ եղել: Այդ տարիներից ի վեր ինձ ուղեկից է եղել պատասխանատվության զգացումը, քանի որ մշտապես ինձ պարտավորված եմ զգացել լինել լավ օրինակ կրտսեր եղբայրներիս համար:

- Իսկ որո՞նք էին մանկությանդ տարիների խաղերը:

- Մանկությանս տարիների խաղերը հիմնականում եղել են ակտիվ՝ սպորտային և ինտելեկտուալ: Հիշողությանս մեջ տպավորվել են մեր ֆուտբոլի և շախմատի սկզբունքային պայքարով ողողված առաջնությունները:

- Ինչպիսի՞ն էին դպրոցական տարիները:

- Դպրոցական տարիներս եղել են շատ բազմաբովանդակ և շատ հետաքրքիր: Դպրոցում եղել եմ աշակերտական խորհրդի նախագահ, ունեցել եմ բարձր առաջադիմություն, մասնակցել եմ տարբեր դպրոցական և միջդպրոցական մրցույթներին:

- Գիրք. ո՞ր գիրքն է, որ երկրորդ անգամ կընթերցես:

- Ընթերցածս գրքերից կառանձնացնեմ Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» վեպը, որի գլխավոր հերոսն իրական մարմնացումն է յուրաքանչյուր հայրենասեր և ազգանվեր հայի, ով կարողացավ «մի ծաղկով գարուն բերել»:

- Խոսենք նախասիրություններից. ի՞նչն է, որ մի քանի ժամով քեզ կտրում է իրական կյանքից:

- Դեռ մանկուց զբաղվել եմ բռնցքամարտով, և մինչ օրս սպորտը իմ օրվա գրաֆիկի մասն է կազմում, նախասիրություններիս շարքից են նաև ընթերցանությունը և ճանապարհորդությունը:

- Ինչի՞ մասին էիր երազում պատանեկության տարիներին:

- Դեռևս պատանեկության տարիներից, փորձելով լինել հնարավորինս իրատես, ունեցել եմ ավելի շատ նպատակներ, քան երազանքներ, ձգտել եմ լինել ծնողներիս արժանի զավակ և հնարավորինս փորձել եմ բաց չթողնել ինքնակատարելագործվելու առիթը:

- Ինչպե՞ս ընտրեցիր այս մասնագիտությունը:

- Երբ արդեն հասել էի գիտակցական այն աստիճանի, որ կարողանում էի ճանաչել և գնահատել սեփական ընդունակություններս և հնարավորություններս, հասկացա, որ ինձ առավել համապատասխան է իրավաբանի մասնագիտությունը, որի նկատմամբ էլ անտարբեր չէի դեռ մանկուց:

- Իրավաբանություն. երեք բառով նկարագրի՛ր՝ ինչ է քեզ համար այն:

- Ճկունություն, անաչառություն և արդարամտություն:

- Ուսանողական տարիներ. ինչպիսի՞ն է Կրթահամալիրում ուսանողական կյանքը:

- Կրթահամալիրում, ի տարբերություն այլ բուհերի, ուսանողական կյանքն ունի իր առանձնահատկությունները, որոնք իմ դիտարկմամբ առավելություններ են, ինչպես նաև կան ձևավորված բարի ավանդույթներ, որոնք առավել հետաքրքիր են դարձնում ուսանողների առօրյան:

- Դու նաև Ուսանողական խորհրդի նախագահն ես: Ինչպիսի՞ն է ընդհանրական ուսանողի կերպարը Կրթահամալիրում:

- Լինելով ՈՒԽ նախագահ՝ ստանձնածս պարտականությունները կրում եմ պատվով և պատասխանատվությամբ ու ինքս մշտապես աշխատում եմ դրական ազդեցություն ունենալ այդ կերպարի ձևավորման վրա: Ուսանողի կերպարը կրթահամալիրում՝ պարտաճանաչ, աշխատասեր, նպատակասլաց, և քանի որ կրթահամալիրն իր ուսանողներին տալիս է ոչ միայն գիտելիք, այլ նաև օժտում է մարդկային և մասնագիտական յուրահատուկ որակներով, ձևավորում է մի կերպար, որն անմրցակից է զգում իրեն կյանքի տարբեր իրավիճակներում:

▶ 4

ՎԱՐԴԱՎԱՌ՝ ՍԻՐՈ ԵՎ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՈՆ

Այս տարի հուլիսի 16-ին նշվեց Վարդավառի տոնը: Ահա թե ինչպես է մեկնաբանում այս տոնի խորհուրդն ազգագրագետ Սոնա Պապիկյանը. ինչպես են այն նշել դեռևս դարեր առաջ, ինչ ավանդույթներ կան, և թե ինչքա՜ն ենք այսօր հեռացել տոնի խորհրդից, որը փորձում են ինչ-որ չափով վերականգնել:

Վարդավառը հեթանոսության շրջանի տոն է, որը հետո հարմարեցվել է քրիստոնեական եկեղեցուն և ավելի շատ նվիրված է եղել ջրի աստվածուհի Նարին ու սիրո աստվածուհի Աստղիկին և իր ամբողջ ընթացքով ինչ-որ չափով վերածվել է բերքի տոնի: Այս տոնակատարությունը կատարվում է Զատիկից 98 օր հետո, այն շարժական տոն է:

Այդ օրն ամենուր եղել են վարդեր, ծաղկեփնջեր են նվիրել, տղամարդիկ մատաղ են արել, իսկ տան կանայք թխել են ու տեսակ-տեսակ քաղցրեղեն պատրաստել, հաջորդ օրը՝ մեռելոցին, սկուտեղներով մրգեր են տարել գերեզմանոց՝ որպես նախնիների պաշտամունքի դրսևորման ձև:

Այս տոնը նշում էին ջրերի մոտ, իրար վրա ջուր էին ցանում, միմյանց հրում ջուրն էին գցում, դա խաղի էր վերածվում, և ոչ մեկը մյուսից չէր նեղանում: Նույնիսկ երիտասարդ հարսներն սկեսրայրներին, քավորներին կարող էին թրջել, և ոչ ոք դրանից չէր նեղանա: Միմյանց ջրելով մարդիկ ցանկանում էին, որ երաշտ չլինի, և դրանով կարծես ապահովում էին հողի խոնավությունը:

Տոնն սկսում էին նշել շաբաթ երեկոյից. խարույկներ էին վառում, աղավնիներ թռցնում, հմտության խաղեր էին կազմակերպում: Այդ օրը զուռնան ու դհոլը հնչում էր մինչ երեկո:

Բայց այսօր այդ գեղեցիկ տոնն այնքան է մոռացվել, որ նրանից մնացել է միայն «ջրոցին»:

Վարդավառը հանդուրժողականության, սիրո տոն է եղել. եթե նույնիսկ մարդիկ ամբողջությամբ թրջվել են, ապա նախապես մի քանի շերտ շոր են հագած եղել և թրջվելուց հետո գռեհիկ պատկեր չի ստացվել, իսկ հիմա զուգված աղջիկներին փողոցում ջրում են ու ուրախանում ստացված պատկերով: Եթե խաղի մեջ են ու համապատասխան շորերով, ապա այն հաճելի է ու գեղեցիկ, բայց, պատկերացրեք՝ զուգված-զարդարված, մազերն հարդարված աղջիկն այդ օրը հյուր է գնում, ու ջրով լի դույլը պարպվում է նրա գլխին. սա ոչ մի աղերս չունի Վարդավառ գեղեցիկ տոնի հետ և, նույնիսկ, զայրացնող է, երբ ինքդ չես խաղում, և քեզ ջրում են:

Եկեք չաղավաղենք մեր գեղեցիկ ավանդույթները:

ՀԱՎԱՏԱՐԻՄ ԼԻՆԵԼ ՀԱՅՐԵՐԻ ՕՋԱԽԻՆ՝ ՉԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ ՊԱՀՊԱՆԵԼ ՆՐԱ ՄՈԽԻՐՆԵՐԸ ԱՅԼ ԱՎԱՆԴԵԼ ՆՐԱ ՀՈՒՐԸ

3 ◀

- Եթե հնարավորություն տրվեր փոխելու մասնագիտությունդ, ի՞նչ կընտրեիր:

- Կհրաժարվեի այդ հնարավորությունից և չէի փոխի մասնագիտությունս:

- Ի՞նչ խորհուրդ կտաս նրանց, ովքեր ցանկանում են ընտրել Կրթահամալիրը:

-Նախ որպես Ուխ նախագահ՝ նման որոշում կայացնելու համար կողջունեմ նրանց բոլորին, կասեմ, որ կրթահամալիրի ուսանողներն ուրախ կլինեն իրենց շարքերը նոր ընկերներով համալրված տեսնել: Խորհուրդ կտամ չթերագնահատել սեփական ուժերը, զինվել պատասխանատվության զգացումով և ձգտել լինել լավագույնը:

- Ո՞րն է կյանքի շարժիչ ուժը քեզ համար:

- Ձգտել վաղը լինել ավելի լավը, քան այսօր:

- Թեմա, որի շուրջ անդադար կխոսես:

- Կախված է զրուցակցից և զրույցի նպատակից. թեման այդքան էլ կարևոր չէ:

Բլից հարցեր
Պատասխանում ենք կարճ և արագ

- Միտք, որն առաջինը ծագում է արթնանալիս:

- Շնորհակալ եմ, Տե՛ր, բարի առավոտվա համար, թող օրը նույնպես բարի լինի:

- Օրդ սկսում ես ժամը...

- 07 : 00-ին

- Սիրածդ աֆորիզմը:

- Հավատարիմ լինել Հայրերի օջախին՝ չի նշանակում պահպանել նրա մոխիրները, այլ ավանդել նրա հուրը:

- Սիրելի զբաղմունքդ:

- Սպորտ, ճանապարհորդություն, ընթերցանություն:

- Արձա՞կ, թե՞ չափածո:

- Արձակ:

- Խորհուրդ, որը կտայիր:

- Ժամանակը տնօրինե՛ք արդյունավետ:

- Իսկ վերջում... (ավելացրու՛ այն, ինչ մտքովդ անցնում է այս պահին)

- Շնորհակալություն հետաքրքիր հարցազրույցի համար:

Հարցազրույցը վարեց ոստիկանության կապիտան Մարիետա Խերանյանը

ԽՈՐՀՈՒՄ ԵՆ ՄԵԾԵՐԸ

Մաքուր խիղճը լավագույն բարձն է:

***

Կույր դատավորից վատթար թշնամի չկա:

***

Ընդհանուր բարօրությունն ստեղծվում է յուրաքանչյուրի երջանկությամբ:

***

Ազգի կարևորագույն կապիտալը ժողովրդի բարոյական հատկանիշն է:

***

Առաքինության մասին լավ դատողություններ անելը դեռ չի նշանակում լինել առաքինի:

***

Օրենքները պետք է արմատախիլ անեն արատները, արմատավորեն առաքինությունը, իսկ արատները խոր արմատներ ունեն, որի համար մեծ ուժ է պետք:

***

Դատավորը խոսող օրենք է, իսկ օրենքը՝ համր դատավոր:

***

Բարձրագույն դատարանը խղճի դատարանն է:

***

Միշտ եղի՛ր քո կամքի տերը, բայց խղճիդ՝ ստրուկը:

***

Ստոր մարդու խիղճն արթնացնելու համար հարկավոր է նրան ապտակել:

***

Արդարությունը բարձրագույնն է բոլոր առաքինություններից:

***

Արդարությունը պետք է լինի ուժեղ, իսկ ուժը՝ արդար:

***

Մեկ անձի նկատմամբ անարդարությունն ահաբեկում է բոլորին:

***

Դատավճիռ կայացնելիս հարկավոր է առաջնորդվել մարդասիրությամբ, շրջահայացությամբ և բարեգթությամբ:

ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ՀԱՐՑԵՐԻ ԱՆԿՅՈՒՆ

1. Քանդակագործ Հաթսոն Բերգլումը Բլեք Հիլս լեռներում կերտել է ԱՄՆ 4 նշանավոր նախագահների դիմաքանդակները: Նրանք էին՝ Ջորջ Վաշինգտոն, Թոմաս Էդիսոն, Թեոդոր Ռուզվելտ: Ո՞վ է 4-րդը:

2. Շարունակել հետևյալ չինական ասացվածքը. «Լավ մարտիկը նա չէ, ով չի ընկնում, այլ նա, ով ...»:

Նախորդ համարում զետեղված հարցերի պատասխանները

1. Սովորել իր աշակերտներից:
2. Այդ բույսը կակտուսն է:

Ստեղծագործում են մերոնք

ՀՈԳՈՒ ԶՐՈՒՅՑ

Այո՛, հենց հայոց բանակի օրը քաղաքը պատվել էր սգի ու արցունքի շղարշով: Ամենուր սուգ էր. քաղաքը հրաժեշտ էր տալիս իր ժպտադեմ զավակին, քաղաքացիների խոսքով՝ խելացի տղային, ուսուցիչների խոսքով՝ քայլող հանրագիտարանին, ընկերների խոսքով՝ մեծությանը, քրոջ խոսքով՝ թիկունքին, հոր խոսքով՝ հենարանին, մոր խոսքով՝ կյանքին...

Մայրը կյանքին էր հրաժեշտ տալիս:

Այդ օրը գորշ ու սև ամպը կանգ առավ մեր տան գլխավերևումգ 90-օրյա սպասումներից հետո գտանք քեզ, 90 երկար ու ձիգ օրեր, որոնք լի են եղել հույսով, հավատով, աղոթքով, կյանքով:

Այդ օրն անգամ լույսն ամաչում էր բացվել, այդ օրը երկինքը ողբում էր, այդ օրն աղավնիներն իրենց թռիչքը քեզ էին նվիրում, այդ օրը... Այդ օրը չկար սուգ տարածող մեքենա, որի վրա պիտի ամրացվեր լույս նկարդ (ընկերներդ նկարդ գրկած էին քայլում), չկար մեքենաների երկար շարասյուն (մարդիկ ուսերի վրա հասցրին քեզ պանթեոն): Այդ օրը լացի ու ողբի հետ մեկտեղ ծափեր հնչեցին հատուկ քեզ համար: Այդ օրն աշխարհը կորցրեց իր երբեմնի խաղաղությունը, արևը՝ իր ջերմությունը, հայրենիքը՝ իր նվիրյալ զավակին: Այդ օրը միակ շահողը հողն էր, որն այսուհետ գրկելու էր քեզ մայրաբար, բայց մի՞թե դու այդպիսի գրկի կարիք ունեիր: Հարց, որ կմնա անպատասխան:

Թվում էր, թե 90-օրյա սպասումների վերջին օրն էր դա, բայց միայն թվում էր: Այսօր ես քեզ սպասում եմ առավել քան երբևէ, ու հավատը ներսումս օր օրի ավելի է ամրանում:

Ինչ էլ լինի, իմացի՛ր, ախպե՛ր, ես քեզ դեռ սպասում եմ:

Ավետիսյան Մելսիդա
Իրավագիտության ֆակուլտետ, 2-րդ կուրս

ԵՐԱՁԻ ԵՐԿԻՐ ՀԱՅԱՍՏԱՆՍ

Բազում անգամ նենգ թշնամին արյունախում
իր զորքերով
Պաշարել է Հայոց հողը ու անցել
մեր քաղաքներով,
Բարբարոսի անսանձ վարքով պղծել
նախնյաց շիրիմները
Ու ավիրել հազարամյա սուրբ ձեռագործ
մեր գրերը,
Սև թրերի հարվածներով գլխատել է
հայ զինվորին,
Առևանգել երկարածամ, դեռատի նուրբ
աղջիկներին,
Քանդել է նա դեպի երկինք վեր խոյացող հին բերդերը,
Հիմքից պոկել ու տապալել բազմաչարչար մեր խաչերը,
Գազանաբար կտրել լեզուն թոթովախոս հայ մանուկի,
Որ մանկական հպարտությամբ հայերենով էլ չասմունքի,
Սակայն որքան մեծ է եղել հայի կրած անհուն ցավը,
Այնքան շատ է կարևորվել Հայոց երկրի անկախ գահը,
Ժողովուրդը միաբանվել, քաջերն իրար կողքի կանգնել,
Հայոց հզոր արքաների դրոշներով պատերազմել՝
Հանուն Հայկի որդիների և հնագույն մեր հայ ազգի:
Անհավասար կռիվներում ցույց են տվել ուժը բազկի,
Հաղթել են բիրտ օտարներին, դուրս շպրտել Հայոց հողից
Ու վեր հառնել մութ աշխարհի տառապանքի ուղիներից:

Արդ, եկել է կրկին ժամը՝ տալ թշնամուն պատասխանը,
Վերականգնել Տիգրան Մեծի հայաստանյան մեր սահմանը,
Նոր շունչ բերել դարերի մեջ լուռ խոնարհված մեր վանքերին
Ու մկրտել հայերենով ոչ հայախոս «մերիններին»,
Իրագործել ազատ երկիր ունենալու մեր խոստումը,
Աշխարհի մեջ բարձր պահել հայի պատիվն ու անունը,
Ծնկի բերել քաջ տղերքի կյանքը խլած ոսոխներին
Եվ աղոթել հերոսաբար կռվում ընկած հոգիներին,
Ջյունաճերմակ ճամփաներով գնալ հասնել սուրբ Մասիսին
Ու այնտեղից ողջույն հղել ազատ, անկախ Հայաստանին:

Կիրակոսյան Կարինե
Ոստիկանության գնդապետ

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ
Լրատվական գործունեություն իրականացնող ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիր ՊՈԱԿ, հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փողոց, 29, հեռախոս՝ 010 77 08 73:
Գրանցման վկայական՝ 29021003884:
Տպագրվել է «ԶԱՆԳԱԿ» հրատարակչության տպարանում
Ծավալը՝ 1 մամուլ: Տպաքանակը՝ 300 օրինակ:
Ստորագրված է տպագրության 28.05. 2023թ.:
Համակարգչային շարվածքը՝ «Պատիվ ունեմ» ամսաթերթի:
Գլխավոր խմբագիր՝ Արուսյակ Քոչարյան